# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

«21» 06 2019թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: հեռ. (0312) 3-26-10

ՈՒՂԵՐՁ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ բուժաշխատողներ

Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ բուժաշխատողի օրվա կապակցությամբ:

Այսօր ևս մեկ առիթ է գնահատելու և կարևորելու ձեր ամենօրյա դժվարին, պատվաբեր ու աստվածահաճո առաքելությունը:

Հավատարիմ մնալով Հիպոկրատի երդմանը՝ դուք ցուցաբերում եք խիզախություն, մասնագտական բարձր պատրաստվածություն՝ ապահովելով բոլորիս համար ամնակարևորը՝ առողջությունը:

Բուժսպասարկման գործընթացի հաջող իրականացումը մեծապես կախված է ձեր արհեստավարժությունից, մարդասիրությունից ու սրտացավությունից:

Կրկին շնորհավորում եմ ձեզ տոնի առթիվ, մաղթում քաջառողջություն, անձնական երջանկություն և հաջողություններ:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ